ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«13» Մայիս 2025թ. ՆՄՈ/539-Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N393 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ԱՂԱՎՆԱՏԱՆ Ղ. ԱԲԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ԴԱՇՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ», «ԲԵՐՔԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ԵՎ «ԱՅԳԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 5.4-րդ և 6-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի փետրվարի 13-ի ՆՄՈ/219-Ա, 2025 թվականի մարտի 27-ի ՆՄՈ/433-Ա, 2025 թվականի ապրիլի 4-ի ՆՄՈ/450-Ա և 2025 թվականի մայիսի 7-ի ՆՄՈ/532-Ա որոշումները.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N393 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշմամբ հաստատված N58 հավելվածի «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց», N73 հավելվածի «Դաշտի միջնակարգ դպրոց», N20 հավելվածի «Բերքաշատի միջնակարգ դպրոց» և N12 հավելվածի «Այգեվանի Մովսես Խորենացու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN1-4 հավելվածների:
2. Հաստատել «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց», «Դաշտի միջնակարգ դպրոց», «Բերքաշատի միջնակարգ դպրոց» և «Այգեվանի Մովսես Խորենացու անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունների փոփոխությունները՝ համաձայն NN1-4 հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2025-05-13 14:19:00 GMT+4
Հավաստագրի է ՀԾՊՀ-ի կողմից

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի մայիսի 13-ի ՆՄՈ/539-Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2017 թվականի հոկտեմբերի 18-ի N393 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
1. «Աղավնատան Ղ. Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց»
2. «Դաշտի միջնակարգ դպրոց»
3. «Բերքաշատի միջնակարգ դպրոց»
4. Այգեվանի Մովսես Խորենացու անվան միջնակարգ դպրոց»

:»:

Գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**

13.05.2025

VERIFIED OCSP 13.05.2025 14:03:39 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023